

ԾԿԵՏԱՆԱ
ՊԱՍԿԱԼԵՎԱ

Հեռուստայրագրող,
ԼՂՀ Պաշտպանության գործերի գնդապետ



Յվետանա Պասկալևա

ԿԻՆՈՎՈՂՎԵՏ - ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - ՊԻՃԱՄԱՆԿԱՐ

Այս հինավուրց հողի վրա ես շատ ծանոթություններ եմ ունեցել: Եղել են հանդիպումներ նաև հայ ժողովրդի ընկերյալ դուստրերի և որդիների հետ: Հենց նրանք օգնեցին ինձ ճանաչել, հասկանալ հայկական ոգին, աշխարհընկալումը, սիրել Հայաստանը ու նրա հետ կապել իմ ներկան: Եվ կարծես ճակատագիրն ինքը 1993 թ. ծանոթացրեց ինձ XX դարի խոշորագույն կոնսերվատոր Վվետա Տերտերյանի հետ*: Այդ հանդիպմանը նախորդել էր Ղարաբաղյան պատերազմի մասին «Իմ բանկազին ողջեր և մեռյալներ» փաստագրական ֆիլմի երաժշտական ձևավորման

ընդգրկվելուց հետո գլխավոր հրամանատար կոնսերվատոր Պասկալևայի պայտակալ կոչումի արժանացրեց Տիգրանյանց 3 եղբայրներին՝ հեղափոխում նրանց շրջանորվեց ռուսական ժառանգական ազնվականների տիրույթ: Այդ ժամանակից նրանց ազգանունը դարձավ Տիգրանովներ: Իրինայի պապի հայրը Ալեքսանդրասյուրի (Գյումրիի) ամբողջ պարերն էր: Պասյը՝ Գրիգորի Ֆադեյի Տիգրանովը ծնվել է Գյումրիում, Ս. Պետրերբուրգի գիմնազիայի և համալսարանի շրջանավարտ էր, Կոստանտնուպոլսի Ռուսաստանի Նորին գերագանցության իսկական խորհրդակալ, Ուրալում ոսկի որոնողների ընկերության նախագահը: Լեռնային Կոնսերվատորիայում ու բնագիտությանը վերաբերող իր 40-ամյա հեղափոխական աշխատությունը Գ. Տիգրանյանը կրակել է Հայաստանին:

Իրինայի հայրը՝ Գ. Տիգրանովը ծնվել է 1908 թ., Ս. Պետրերբուրգում, Ֆոնտանկայի ափին գրավոր հայրնի վաճառական՝ Ելիսեևի շքեղ ճարտարապետությանը շենքում: Հեղափոխում, իր գրքում նա գրել է. «Իմ ծնողների բնակարանը Ս. Պետրերբուրգի

«ԿՅԱՆՔԻ ՄԻՄՖՈՆԻԱ»

ՆՎԻՐՈՒՄ Է ԻՐԻՆԱ ԳԵՌՈՂԻ ՏԻԳՐԱՆՈՎԱ-ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

երկար փնտրությունը: Աստվածային երաժշտությունը գերեց ինձ, որոշեց իմ ընկերությունը և ծանոթացրեց հեղինակի հետ: Մեկ ամիս անց, ես վիրավորվեցի Ղարաբաղում: Անսպասելիորեն, այն հիվանդանոցի մուտքին, ուր ես բուժվում էի, հայտնվեցին Տերտերյան ամուսինները: Իրենց «գերին» հայտարարելով՝ նրանք ինձ տարան Այրիվան՝ Սևանա լճին նայող իրենց ամառանոցը: Այսպես էլ սկսվեց 18 տարի տևողությամբ իմ բարեկամությունը Իրինա Տիգրանովա-Տերտերյանի հետ՝ այդ զարմանալի արևաբույր հայուհու և իրական մտավորականի, ով ինձ համար դարձավ մայր, ընկերուհի և բույր:

Իրինա Տիգրանովան XX դարի հայ ակադեմիկոս երաժշտագետ Գեորգի Գրիգորիի Տիգրանովի դուստրն է:

Տիգրանովների գերդաստանը սկիզբ է առնում հինավուրց հայկական ազնվական տոհմից: Ազգի նահապետը Կարսի իշխան Վարդան Կիլան Տիգրանյանցն էր, ով ապրել է XVIII դարի առաջին կեսին: Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում

մշակութային օջախներից մեկն էր: Այստեղ մշտապես հավաքվում էին դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ, գիտնականներ...»: Գուցե այդ մթնոլորտն էլ կանխորոշեց նրա մասնագիտության ընտրությունը: Նա ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը, որտեղ էլ աշխարհել է ավելի քան կես դար: Իսկ 1939 թ. նա պրոֆեսոր էր նաև Երևանի կոնսերվատորիայում և Հայաստանի երաժշտագիտական դպրոցի հիմնադիրներից մեկն էր: Հենց նա էր, որ փնտրեց, գտավ և հատկապես վերականգնեց հայկական առաջին օպերան՝ Տիգրան Չուխաջյանի «Արշակ Բ»-ը:

Իրինա Գեորգիի Տիգրանովան ծնվել է 1936 թ., Լենինգրադում: Նրա մայրը բնիկ Ս. Պետրերբուրգի Ելիզավետա Միխայլովնան էր, Լիլյան, ինչպես մտերիմներն էին կոչում:

Իրինան միաձուլեց իր մեջ այդ ընտանիքի և իհարկե նաև Ելիզավետա Միխայլովնայի ընտանիքի ժառանգականությունը, այսինքն հայկական և ռուսական մշակույթները՝ իրենց բարձրագույն դրսևորմամբ, - հիշում է Ալինա Աշոտի Փահլևանյանը:

* Հատվածներ Յ. Պասկալևայի վավերագրական ֆիլմից:

ԵՐԱՇՉՈՒՄԱՆ ԳՆՅԱՍՏԱՆ 3-4(42-43)2011

Նվիրում Ի. Գ. Տիգրանովային

Նրա մանկությունը համընկավ «Լենինգրադի բլոկադայի» (շրջափակման) ծանր տարիներին: 1942 թ. Տիգրանովների ընտանիքը ստացակալած Լադոգա լճով անցնող «կյանքի ճանապարհով» տեղափոխվեց Գավրիլով Յար փոքրիկ քաղաքը: Այնուհետև, նրանք հիմնավորվեցին Երևանում, ուր դուստրը՝ Իրինան, ընդունվեց Պ. Չայկովսկու անվ. երաժշտական դպրոց:

Ա. Փ. - Մենք ավարտեցինք երաժշտական 10-ամյա ուսումը՝ որպես դաշնակահարուհիներ: Յետագայում որոշեցինք, որ կոնսերվատորիայում պիտի սովորենք մաս երաժշտագիտություն: Երկու ֆակուլտետն էլ ավարտեցինք, այնպես որ Իրինան և ես երկուական դիպլոմ ունենք:

Կոնսերվատորիայի նախկին շենքում Իրինան ծանոթացավ բարձր կուրսի ուսանող Ավետ Տերտերյանի՝ Ֆրեդի հետ, ինչպես մտերիմներն էին անվանում նրան:

Ա. Փ. - Մենք կոնսերվատորիայում ակտիվ մասնակցում էինք ուսանողական գիտական խորհրդի աշխատանքներին, որն, ի դեպ, ղեկավարում էր Ավետ Տերտերյանը: Ամեն ինչ սկսվեց 2-րդ կուրսում. մենք զգացինք, որ Ֆրեդն անտարբեր չէ Իրինայի նկատմամբ: Նրանք ամուսնացան: Իրինան 4-րդ կուրսում էր, երբ ծնվեց Ռուբենը:

Իր կնոջը՝ Իրինային է Ֆրեդը նվիրել լարային առաջին Կվարտետը և իսանդադարանքով լի սիրտ րոդերը:

ԻՐԻՆԱՅԻՆ՝ ՏԻԿՆՈՉՍ

**Իրինա: Ծնվել ես գարնանը:
Գարուն ներշնչեցիր իմ հոգում:
Քեզ հետ դարձա ես այլ մեկը,
Ամենը սիրելի դարձավ Աշխարհում:**

**Օ՛կյանք: Քեզ եմ ես պարտական
Գարնան հրաշագործության համար,
Որը երջանկություն է ծնում,
Եվ զարմանահրաշ երազներ:**



Իրինա Տիգրանովա, Յվետանա Պասկալա, Ա. Տերտերյանի անվ. երաժշտական դպրոցի անվանատախտակի բացմանը, կոմպոզիտորի ծննդյան 75-ամյակին, 2004 թ.

**Իրինա, իմ ընկեր,
Խոսքս հանգով օժտված չէ,
Քայց ամբողջ հոգով ցանկանում եմ,
Գարնան ծիածանով, որպեսզի
Քո ճանապարհը լուսավորվի...**

Նրանց ընտանիքը յուրահայտուկ էր: Նրանք պարզապես ամուսիններ չէին: Նրանք համախոտ ընկերներ էին, Մարդիկ, ովքեր սիրահարված էին արվեստին, երաժշտությանը...

Քաղաքի գլխավոր պողոտայի՝ երբեմնի փայտե պարզամբներով այս տանը, 40-ականների կեսերից ապրում էր Տիգրանովների ընտանիքը: Եվ այս տանն էլ սիրով ընդունեցին փեսային՝ Ավետ Տերտերյանին:

Տերտերյանների ընտանիքը 1967 թ., Դեմիրճյան փողոցի ՀՀ Կոմպոզիտորների տան բազմա-հարկ շենքում բնակարան ստացավ: Իրինան ջանում էր սրեղծել ամուսնու համար անհրաժեշտ առանձնահատուկ մթնոլորտ ու համապատասխան պայմաններ: Այսպես հայրնվեց այս կարծր կահույքը (ի դեպ, Տերտերյանի շեքերով պարբերաբար), իսկ հյուրասենյակի զարդարանք դարձան Տերտերյանի համերգների հայտագրերը և նկարները, որոնք սրեղծվել էին տանտիրոջ հավերժական երաժշտությամբ ներշնչված: Եվ Տերտերյանական օջախի գլխավոր տեսարժան իրերը, իհարկե, դարձան 2 դաշնամուրը:

Այստեղ ես և ժամանակի ընթացքում դեղնած ընդհանրական ալբոմները, Տիգրանովների տոհմա-ծառի պարմական վկայությունները, գրքեր, պարտիտուրներ... և կոմպոզիտորի՝ հնչեղ զանգակների յուրահատուկ հավաքածուն:

Ա. Փ. - Իրինան ապրում էր Ֆրեդի բոլոր ծրագրերով: Եվ դա զգացվեց Տերտերյանի անսպասելի մահից հետո: Իրինան իր ամենակարևոր պարտքը համարեց Ֆրեդի արվեստի տարածման գործը շարունակելը. հրատարակություններ, կատարումներ ոչ միայն Հայաստանում, այլև տար-



Հ. Պ. Ափիլյան (թանգարանի տնօրեն), Ի. Գ. Տիգրանովա, Ս. Մ. Ազնաուրյան, Գ. Կ. Շադոյան Պատմամշակութային գիտաժողով, Նիկողայոս Տիգրանյանի տուն-թանգարան, Գյումրի, 1996 թ.

բեր երկրներում: Նրա կյանքը ականավոր մարդու համախոհ կնոջ կյանք էր: Իսկ ականավոր մարդու կին լինելն այնքան էլ հեշտ չէ: Շատ բարդ է: Երբեմն մոռանում ես ինքդ թեզ: Իրիման ինքը գիտնական էր՝ արվեստագիտության թեկնածու. նա փայլուն աշխատություն է գրել: Պաշտպանել է թեզ «Արամ Խաչատրյանի երաժշտության քննարկական էջերը» թեմայով: Նա կարող էր շարունակել, դոկտորական էլ պաշտպանել... Բայց նա այդ ամենը թողեց և նվիրվեց Տերտերյանին:

Ավելի Տերտերյանն Իրիմային է նվիրել իր 6-րդ Միսֆունիան՝ որպես 20 տարվա ամուսնական կյանքի երախտիքի, սիրո առհավարչյա:

Իրիմա Տիգրանովան Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր էր, բազմաթիվ հոդվածների, հրատարակված 2 գրքի հեղինակ, որոնցից մեկը նվիրված է Արամ Խաչատրյանի սրեղծագործական կյանքին: Արամ Խաչատրյանը բարձր էր գնահատում Իրիմային՝ ոչ միայն որպես Տիգրանովի դասընկեր, այլև որպես բարձրակարգ մասնագետի և հարուստ գիտելիքների տեր մարդու: Նրան ճանաչում և գնահատում էին Ռուսաստանում, Բելառուսում, Գերմանիայում: Իսկ Հայաստանում նա երաժշտագետների մի մեծ աստղաբույլ է դաստիարակել:

Իրիմա Տիգրանովայի ասպիրանտ և նրա ղեկավարությամբ թեկնածուական թեզը պաշտպանած Նարինե Ավետիսյանի հուշերից.

Իրիմա Տիգրանովան հմայիչ անձնավորություն էր. խելացի, հետաքրքիր, սակայն որպես գիտական ղեկավար խիստ էր, կարգապահ և մեզ էլ ստիպում էր այդպիսին լինել: Ինչ էլ որ մենք կատարում էինք, նա ուշադիր, մանրազնի ուսումնասիրում էր՝ երբեք չժամրաբեռնելով և չստիպելով փոխել մեր մտքերը: Մենք միշտ ազատ ընտրության հնարավորություն ունեինք: Նա միշտ կարողանում էր ճիշտ հունով ուղղորդել և դա արվում էր շատ դիվանագիտորեն և նրբանկատորեն. օրինակ՝ «Չե՞ք կարծում» կամ «Չե՞ք համարում»: Մենք միանգամից սկսում էինք մտածել այդ մասին: Հոգատարությամբ էր սերմանում այդ վերաբերմունքը երաժշտության՝ որպես գիտության, ամենակարևորը՝ խոսքի մշակույթի նկատմամբ: Դա իր ստեղծագործական և գիտական կյանքի երկրորդ մասն էր, որը նա ներդրում էր:

Քննադատությունը պետք է լինի շատ օբյեկտիվ և չառաջացնի բացասական վերաբերմունք. դա էլ է Տիգրանովյան դպրոցը: Նա շարունակում էր իր հոր՝ Խորհրդային Միության մասշտաբով ականավոր երաժշտագետ Գեորգի Գրիգորիի Տիգրանովի ավանդույթները: Նրա ստեղծագործական նախասիրություններից էր, իհարկե, բեմը. համերգների ներածական խոսքը, հիասքանչ ռուսերեն լեզուն, լսարանի հետ շփման եզրերը, բարձր մակարդակը: Նա միշտ խոսում էր ստույգ, ժամանակաչափի մեջ:

Իրիման սիրում էր բեմը: Նրա արտիստականությունը գերում էր և մատչելի էր դարձնում այն ծավալուն նյութը, որին տիրապետում էր: Նրա հերթական դասախոսությունը վերածվում էր հրաշա-

գեղ, անմոռանալի ներկայացման: Երբ նա պարմում էր Բեթհովենի մասին, թվում էր, թե ինքն ապրում է Բոննում, իսկ երբ խոսում էր Վերդիի մասին, թվում էր, թե քայլում է Իտալիայի քաղաքների փողոցներով:

Էդվարդ Միրզոյանը Իրիմա Տիգրանովայի մասին.

Նա յուրօրինակ է, նա միակն էր: Նա պարզուցանակ չէր իր պարզության և հստակության մեջ նա միակն էր: Նա սովորական չէր: Նրա ընտանիքի արտասովոր ավանդույթները, հայրը, որը, ի դեպ, նրա մեջ էր, նրա բնավորության մեջ: Նա շատ բան էր ժառանգել: Իրիման իմ կյանքում հանդիպած հազվադեպ անհատն էր: Բնական: Ինչպես էր նա ընկալում Ֆրեդ Տերտերյանին. ոչ ոք չէր հասկանում, բայց հիանալի հասկանում էր Ֆրեդը: Նա հպարտանում էր, բայց այդ հպարտության մեջ չկար ցուցադրականություն: Նա մեծագույն անհատականություն էր: Տարիներ շարունակ Ֆրեդի կողքին՝ նա անհատ էր՝ անկախ Տերտերյաներից, Ավետից:

Ջութակահար և դիրիժոր Սերգեյ Սմբախյանն իր դասախոսի մասին.

Բոլոր երիտասարդ կոլեկտիվներն աջակցության կարիք ունեն, և Իրիմա Գեորգիին այն մարդկանցից էր, որ չափազանց շատ էր օգնում երիտասարդական ցվագախմբի ստեղծման առաջին իսկ օրերից, առաջին ելույթներից: Նա միշտ ներկա էր մեր համերգներին, նույնիսկ երբ դրանք համերգային դահլիճներում չէին ընթանում, ինստիտուտներում, կամ այլ հեռու տեղերում: Եվ դա մասնագիտական մեծ խթան էր: Նա այն մարդն էր, ով սպիտակ, պայծառ, բարի էներգիա էր ճառագում: Հաճախ նա գալիս էր սենյակ, բոլորը շնորհավորում էին, իսկ ես հասկանում էի, որ լավագույն գովեստները չէին հնչելու: Եվ մի մեծ համերգից հետո ես հասկացա, որ քննադատությունն առաջին հերթին աճելու խթան է:

Նա՝ որպես Հայաստանի երաժշտական աշխարհի բարի կերպար, իմ կայացման գործում շատ մեծ դեր է խաղացել: Մենք բոլորս, մասնավորապես ես, նրա կարիքը շատ ունեինք: Կան մարդիկ, ովքեր անմոռանալի են. նրանք ժամանակից դուրս են: Ինձ համար նա հենց այդպիսին է:

Իրիմա Գեորգիի դասախոսություններն անցնում էին քար լռությամբ, քանի որ պարզապես երաժշտության մասին դասախոսություն և գիտելիք չէին, այլ ընդհանուր երաժշտական աշխարհայացք, որն անչափ հետաքրքիր էր բոլորիս՝ բոլոր ուսանողներին: Երբ տեսնում ես դասախոսի, ով 100%-ով հավատում է նրան, ինչ պատմում է և ինչ դասավանդում և ապրում է դրանով: Իսկ նա իրոք ապրում էր դրանով, և դա բոլորը գիտեին: Երբ դասախոսությունների ժամանակ մշտապես Դուք-ով էր խոսում, դա պարտավորեցնում էր և ստիպում հասկանալ՝ ով է ուսուցիչը և ինչ բարոյական արժեքներ ունի: Այդ ամենն ամբողջության մեջ Իրիմա Գեորգիին էր:

Երբ կա կոնսերվատորիայի պրոֆեսոր, երբ

Նվիրում Ի. Գ. Տիգրանովային

կա շարժառիթ, երաժշտական և ինտելեկտուալ աջակցություն և շատ ճիշտ քննադատություն, այս ամենը ուղղորդում է՝ շեշտը դնելով պակասող տարրերի վրա ընդհանուր վերելքի համար: Իրինա Գեորգիի լուսավոր կերպարը ես միշտ փնտրել եմ դահլիճում: Ընդամենը մեկ անգամ նա ներկա չէր Ա. Խաչատրյանի անվ. դահլիճում մեր համերգին: Համերգը շատ երկար էր: Դրանից հետո՝ գիշերը, չդիմացա, զանգահարեցի ու հարցրեցի. «Ի՞նչ էր պատահել, որ չէիք եկել»: Պարզվեց, որ հիվանդ է: Դա միայն մեկ անգամ էր:

Մարդիկ-սյուներ, ինչպիսին Իրինա Գեորգիին էր, մեր հասարակության ընդհանուր աճի շարժիչ ուժերն են:

Նա ապրում էր Հայաստանի երաժշտական կյանքով: Նրա մշտական ներկայությունը համերգներին ու շաղկապային դրսևորում էր ոչ միայն պրոֆեսիոնալների, այլև ուսանողների ելույթների նկատմամբ: Նրան հաճախ կարելի էր տեսնել զանազան մշակութային միջոցառումների ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ երկրի տարբեր շրջաններում: Իրեն հատուկ մեծ լավատեսությամբ քաջալերում, ոգևորում էր բոլորին, իսկ օժտված երիտասարդների նկատմամբ հատուկ վերաբերմունք ուներ:

Մենք հաճախ էինք զբոսնում Երևանի փողոցներով՝ փնտրելով քաղաքային միջավայրի գեղեցկությունը մարդկային ժպիտներում, ծաղկող ծառի, երկնքով սահող ամպերում: Եվ նույնիսկ ծանր կախված սև ամպում նա ինչ-որ գեղեցիկ մի բան էր գրնում: Սակայն կար մի բան, որի կողքով նա չէր կարող անարարքեր անցնել. դա ողորմության համար մեկնված ծերունիների ձեռքն էր: Նա ասում էր. «Ես սա չեմ կարող տեսնել», և միշտ օգնում էր:

Իրինա Տիգրանովային միշտ աչքի էր ընկնում իր գեղեցիկ մազերով: Նրա վառ անհարկանությունը և յուրահարուկ էությունն ընդգծող սանրվածքն այդպես էլ անփոփոխ մնաց ուսանողական տարիքից: Ոճի փոփոխությունը պայմանավորում էր որևէ կրճազարդ կամ շալ: Հազնվում էր գույս, դասական ոճով: Նոր հագուստը հազվադեպ էր թույլ տալիս իրեն: Սակայն նրա ամբողջ կերպարը ներդաշնակ էր, պարզ և միաժամանակ անհասանելի բարձր:

Նրա ոգևորված շփումը մարդկանց հետ, նրա լուսավառ ժպիտը, ջերմությունն ու պայծառությունը հմայում էին բոլորին: Նա խոսում էր վերամբարձ շեշտադրությամբ՝ փորձելով բարձրացնել զրուցակցին, ինչպես ինքն էր ասում, գեղնից մի քիչ վեր: Նրա հետ շփվելիս կարելի էր սրանալ լավատեսության այն լիցքը, որ մեզ այնքան է պակասում կյանքում: Նրա ոգեշնչվածությունը ճանապարհ էր հարթում դեպի հայկական ոգու ճանաչումը:

Իսկ սա մեր սիրելի վայրն էր: Այս սեղանիկի մոտ պարտադիր մեկ բաժակ կապուչինո սուրճի շուրջ ծավալվում էին մեր արարողակարգային հանդիպումները: Ինչ համար նա իսկական մրավորական էր՝ օժտված լայն մրահորիզոնով և երկրի ապագայի նկատմամբ քաղաքացիական պատաս-

խանարվությամբ: Իրինան այն նվիրված հանդիսատես էր, ով իմ ոչ մի ռադիո հաղորդումը բաց չէր թողնում, իսկ յուրաքանչյուր եթերից հետո առաջին զանգը նրանն էր: Մեծ ոգևորությամբ անպայման կգովեր, սրեղծագործական նոր ավյուն կհաղորդեր: Իմ ամեն մի էլույթի ժամանակ նա անպայման առաջին շարքում էր՝ ծաղկեփունջը ձեռքին: Հպարտանում էր ինչևնով և ամեն անգամ լսելով Ղարաբաղի մասին իմ պարմությունները՝ նրա աչքերն արցունքով էին լցվում: Նա կարողանում էր ուրիշի ցավն ու ուրախությունը սեփականի նման ընդունել: Նա զգում էր, երբ ինչ համար դժվար էր և միշտ փորձում էր նեցուկ լինել: Մենք զրուցում էինք, երբեմն լռում՝ հրաշալի հասկանալով իրար առանց խոսքի: Եվ միշտ ներկա էր Ա. Տերտերյանը և նրա երաժշտության թեման: Այն միշտ մնում էր անավարտ, ապա շարունակվում փանք և Այրիվանի նրա ամառանոցում, որտեղ Իրինայի ջանքերով պահպանվել էին իսպառնիչ միջավայրն ու Տերտերյանական ոգու ներկայությունը:

Ամենուր, ուր հնչում էր Ավետ Տերտերյանի երաժշտությունը, հայկական կամ արտասահմանյան թեմում, Իրինան միշտ ներկա էր փորձերին և համերգներին: Մյուսի թրթիռով ականջալուր՝ երաժշտության հնչյուններին, տերտերյանական յուրաքանչյուր նուրային՝ Իրինան վեր էր մտնում՝ հաղթահարելով երկրի չգողական ուժը:

Ոգեշնչումով պարմելով Ավետ Տերտերյանի երաժշտության, նրա կենսափոխաբանության մասին՝ Իրինան միշտ ուրախությամբ էր պարասիսանում բոլոր հարցերին՝ ասես փոքր-ինչ բացելով տերտերյանական աշխարհի գաղտնիքների շղարչը և ավելի շար երաժշտատերների մասնակից դարձնում նրա աստիճանային երաժշտությանը: Երևան վերադառնալուց հետո նա կիսում էր իր փրկավորությունները Ավետ Տերտերյանի երաժշտության, կարարողական նոր մեկնաբանությունների մասին ընկալելով որպես հայկական երաժշտության հերթական հաղթանակ արտասահմանում:

Իրինան տեսավ այն օրը, երբ որդին վերադարձավ: Դա ամենահուզիչ հանդիպումն էր, որ ինչ երբևէ բախր է վիճակվել տեսնել:

Իրինան շրտապեց նրան հանձնել իր երկրային կյանքի բոլոր գործերը, որոնց համար նա այսուհետ պարասիսանարվություն է կրում: Այսօր նա բարդ առաքելություն ունի. պահպանել և շարունակել Տերտերյան-Տիգրանովային ընդհանրապես ավանդույթները:

Դժվար է Իրինային պարկերացնել տերտերյանական փան գույս համեստությունից դուրս: Դժվար է Սևանի ափի փունջը պարկերացնել առանց Իրինայի: Ներդաշնակ մի աշխարհ, ուր նրա մեղմ ժպիտը լցնում էր համեստ ինտերյերի հարմարավետության բացակայությունը:

Երևանի Ա. Խաչատրյանի անվ. դահլիճի այս երկու բազկաթոռներն ընդամենական են՝ Տերտերյանական: Հենց այստեղից էր Իրինա Տիգրանովային Ավետ Տերտերյանի հետ, իսկ ավելի ուշ՝ առանց նրա, լսում բոլոր համերգները:

Սակայն Իրինան այլևս չի լինի այս դահլիճում:

Նվիրում Ի. Գ. Տիգրանովային

Իրինա Գեորգիին մեզանից հեռացավ ծննդյան 75-ամյակից 2 օր առաջ: Նրա հեռանալն այլ աշխարհ անկանխաբերելի էր և լուռ, թեպետ երկրային կյանքը վառ էր, ակտիվ, կենսասափարար և ուսուցանող:

Հ. Գ.

Նա շողջողում էր՝ շուրջը ստեղծելով ու տարածելով բարի մթնոլորտ, վարակում լավատեսությամբ, առատորեն կիսվում իր իմաստուն կենսափորձով: Կատարելով իր երկրային առաքելությունը՝ նա

հեռացավ երկինք՝ նշելու հորեյանն իր աստղային ամուսնու՝ Ավետ Տերտերյանի հետ: Ինչ-որ տեղ, վերևից, նրանք կշարունակեն լսել երաժշտության հնչյուններն ու հիանալ, ինչպես անում էին միշտ այս կյանքում: Իրինա Գեորգիին սովորեցնում էր. «Ամեն բան պետք է անել ուրախությամբ ու սիրով»: Մեծ սիրով ու անսահման տխրությամբ էինք պատրաստում այս ֆիլմը յուրահատուկ հայուհու մասին, ում նվիրված է հանճարեղ սիմֆոնիան:

Թարգմանությունը՝ Գ. Կ. Շագոյանի



Յվետանա Պասկալեային շնորհում են Ավստրիայից գործիչները որոնք պարգևատրում են Հայ իրականությունում այլազգեի անվանի մտավորականների ներդրումների համար հնչում էր Ա Տերտերյանի երաժշտությունը թե՛ վավերագրական ֆիլմերում, թե՛ ՀՊՖՆ դիրիժոր Է. Թոփչյանի ղեկավարությամբ



Իրինա Գեորգիի Տիգրանովա, Տիգրանովյան արմատների մասին գեկույց, Գյումրի, գիտաժողով ԵՊԿ մասնաճյուղի դահլիճում, 2004 թ.



Դաշնակահարուհիներ՝ Արմինե Պողոսյան (Կ. Սարաջյանի անվ. ՄԵԳ-ի տնօրեն), Վերգինե Սարգսյան (ՀՀ հանրային ռադիոյի խմբագիր), երաժշտագետներ՝ Գոհար Շագոյան («Երաժշտական Հայաստան» միջազգային գիտական ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր, «ԵՊԿ հրատ.» հիմնադիր-տնօրեն), Իրինա Գեորգիի Տիգրանովայի հետ, Սկրտիչ Կուբեյան (Ի. Գ. Տիգրանովայի ասպիրանտ), Սուսաննա Դուկասյան («ԵՊԿ հրատ.» համակարգչային օպերատոր) Ավետ Տերտերյանի ծննդյան 75-ամյակը, 3-րդ Սիմֆոնիա, Գիլիջան, 2004 թ.

Резюме

В статье известной тележурналистки *Цветаны Паскалевой* "Симфония жизни" автор вспоминает о своем знакомстве с И. Г. Тиграновой, которое переросло в большую, настоящую дружбу. Через эту дружбу произошло познание музыки А. Тертеряна, которую тележурналистка использовала в оформлении своих документальных фильмов-повествований об освободительной войне армянского народа в 1990-ых годах в Нагорном Карабахе.

Summary

The famous TV reporter, NKR general of defense forces *Tsvetana Paskaleva*, - "The symphony of life".

In the article she describes her acquaintance with I. G. Tigranova which grew into a great, real friendship and through this friendship - into the cognition of A. Terteryan's music, which the journalist used in the formulation of her narrative film about the liberation war of 1990 years of the Armenian people and about the atrocities of the Azeri.